https://doi.org/10.46991/hc.2025.si1.106

The State of the Study of the History of the Third Republic of Armenia and the Problems of Armenian Historiography

Edik Minasyan
https://orcid.org/0000-0003-3206-6103
YSU Head of the Chair of History of Armenia, Professor, Doctor of History
eminasyan@ysu.am

Keywords - Third Republic of Armenia, research, state of research, new independent state, freedom of speech, multi-party system, poverty, emigration, issues of domestic and foreign policy, examination and analysis of documents and materials.

The article analyzes the current state of the study of the history of the Third Republic of Armenia. In the direction of the study of the history of the republic, the available literature is divided into two parts. The first part relates to the sources and studies of the process of formation of independence of the Republic of Armenia and the field of domestic policy of the Republic of Armenia. The first part also includes studies on socio-political life, formation of the army, socio-economic, including scientific, educational and cultural life. In the field of studying the domestic and foreign policy of the Third Republic of Armenia, there are defended dissertations on the above-mentioned issues, which complement the results of research on the history of the republic.

Among the printed sources, collections highlighting the activities of various international structures of the republic, containing rich documentary materials and serious scientific analyses, as well as the results of the activities of various sectors of the Third Republic of Armenia, including the national assessment reports of the Republic of Armenia, information collections describing the activities of the UN in Armenia, annual issues of the Human Development Index, the National Report, annual issues of the Social and Economic Situation of Armenia for January-December published by the National Statistical Agency of the Republic of Armenia, issues of

History and Culture. Journal of Armenian Studies, special issue1, 2025, pp. 106-121.
Received: 03.12.2024
Revised: 06.02.2025
Accepted: 26.04.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

statistical yearbooks and statistical booklets of Armenia, annual analytical reports and collections reflecting the social state of Armenia, etc should be noted.

In studying the history of the republic, the author emphasizes the creation of special schools for the study of the history of the republic, one of the best manifestations of which is the defense of about two dozen dissertations under his scientific supervision, covering various areas of the republic's spheres of activity. The state of knowledge of the history of the Third Republic of Armenia proves that, despite three voluminous monographs published by the author of these lines, there is still no full-fledged monograph covering the international situation and foreign policy of the Third Republic of Armenia up to the present day. The author of these lines has begun to solve this problem.

In the end, several very important recommendations have been given for a complete picture of the study, which will certainly help in terms of significantly increasing the effectiveness of research in this area.

Հայաստանի երրորդ հանրապետության պատմության ուսումնասիրության վիճակն ու հայ պատմագիտության խնդիրները

Էդիկ Մինասյան
ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, պ.գ.դ.

Հիմնաբառեր - Հայաստանի երրորդ հանրապետություն, հետազոտություն, ուսումնասիրության վիճակ, նորանկախ պետություն, խոսքի ազատություն, բազմակուսակցականություն, գործազրկություն, արտագաղթ, ներքին և արտաքին քաղաքականության հիմնախնդիրներ, փաստաթղթերի և նյութերի քննական վերլուծություն:

Հոդվածում քննական վերլուծության է ենթարկվում Հայաստանի երրորդ հանրապետության պատմության ուսումնասիրության ներկա վիճակը: Հանրապետության պատմության հետազոտության ուղղությամբ հրապարակի վրա եղած գրականությունը բաժանվում է երկու մասի: Առաջինը վերաբերում է ՀՀ անկախության գործընթացի և ՀՀ ներքին քաղաքականության ոլորտի սկզբնաղբյուրներին և ուսումնասիրություններին:

Առաջին մասի մեջ են մտնում նաև հասարակական-քաղաքական կյանքի, բանակաշինության, սոցիալ-տնտեսական, այդ թվում գիտակրթական ու մշակութային ոլորտի վերաբերյալ ուսումնասիրությունները: Հայաստանի երրորդ հանրապետության ներքին և արտաքին քաղաքականության ուսումնասիրության ոլորտում կարևորվել են այդ հինախնդիրների վերաբերյալ պաշտպանած ատենախոսությունները, որոնք լրացնում են հանրապետության պատմության հետազոտության արդյունքները: Տպագիր սկզբնաղբյուրներից կարևորվում են նաև փաստագրական հարուստ նյութեր ու գիտական լուրջ վերլուծություններ պարունակող հանրապետության տարբեր միջազգային կառույցների ծավալած գործունեությունը Հայաստանի երրորդ հանրապետության տարբեր ոլորտների արդյունքները լուսաբանող ժողովածուները, որոնցից առանձնացվել են ՀՀ ազգային գնահատման զեկույցները, ՀՀ-ում ՄԱԿ-ի գործունեությունը նկարագրող տեղեկատվական ժողովածուները, «Մարդկային զարգացման ազգային զեկույց»-ի ամենամյա համարները, ՀՀ ազգային վիճակագրական գործակալության կողմից հրատարակված «Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակի հունվար-դեկտեմբեր»-ի տարեկան համարները, Հայաստանի վիճակագրական տարեգրքերի և վիճակագրական գրքույկների ամենամյա համարները, ՀՀ սոցիալական վիճակն արտացոլող ամենամյա վերլուծական զեկույցներն ու ժողովածուները և այլն:

Հանրապետության պատմության ուսումնասիրության մեջ հեղինակը կարևորում է հանրապետության պատմության ուսումնասիրման հատուկ դպրոցների ստեղծումը, որի լավագույն արտահայտություններից է նրա ղեկավարությամբ շուրջ երկու տասնյակ ասպիրանտների կողմից հանրապետության տարբեր ոլորտներն ընդգրկող ատենախոսությունների պաշտպանությանը: Հայաստանի երրորդ հանրապետության պատմության ուսումնասիրության վիճակը փաստում է, որ չնայած տողերի հեղինակի կողմից հրատարակված երեք ծավալուն մենագրություններին, դեռևս հրապարակի վրա չկա հատկապես Հայաստանի երրորդ հանրապետության միջազգային դրության ու արտաքին քաղաքականությունը մինչև մեր օրերն ընդգրկող ծավալուն մենագրության, որին ձեռնամուխ է եղել հեղինակը:

Վերջում ամբողջական ուսումնասիրության համար արվել են մի քանի խիստ կարևոր առաջարկություններ, որոնք անշուշտ կօգնեն ուսումնասիրությունների արդյունավետությունը էապես բարձրացնելու առումով:

Состояние изучения истории Третьей Республики Армения и проблемы армянской историографии

Эдик Минасян
ЕГУ заведующий кафедрой истории Армении, профессор, д.и.н.

The State of the Study of the History of the Third Republic of Armenia and the Problems of Armenian Historiography

Հայաստանի երրորդ հանրապետության պատմության ուսումնասիրության վիճակն ու հայ պատմագիտության խնդիրները

Ключевые слова - Третья Республика Армения, исследование, состояние исследований, новое независимое государство, свобода слова, многопартийность, безработица, эмиграция, вопросы внутренней и внешней политики, экспертиза и анализ документов и материалов.

В статье анализируется современное состояние изучения истории Третьей Республики Армения. По направлению исследования истории республики имеющаяся в наличие литература делится на две части. Первая часть относится к источникам и исследованиям процесса становления независимости РА и области внутренней политики РА. В первую часть также включены исследования по общественно-политической жизни, формированию армии, социально-экономической, в том числе научной, образовательной и культурной жизни. В области изучения внутренней и внешней политики Третьей Республики Армения есть защищенные диссертации по вышеупомянутым вопросам, которые дополняют результаты исследований по истории республики.

Среди печатных источников выделяются сборники, освещающие деятельность различных международных структур республики, содержащие богатые документальные материалы и серьезные научные анализы, а также результаты деятельности различных отраслей Третьей Республики Армения, среди которых национальные оценочные отчеты РА, информационные сборники, описывающие деятельность ООН в Армении, ежегодные выпуски индекса «Человеческого развития», «Национального доклада», ежегодные выпуски «Социально-экономического положения Армении за январь-декабрь», издаваемые Национальным статистическим агентством РА, выпуски статистических ежегодников и статистических буклетов Армении, ежегодные аналитические отчеты и сборники, отражающие социальное состояние Армении и т.д.

В изучении истории республики автор подчеркивает создание специальных школ по изучению истории республики, одним из лучших проявлений которых является защита около двух десятков диссертаций под его руководством, охватывающих различные области сферы деятельности республики. Состояние изученности истории Третьей Республики Армения доказывает, что, несмотря на три объемистые монографии, изданные автором строк, до сих пор не существует полноценной монографии, освещающей международное положение и внешнюю политику Третьей Республики Армения вплоть до наших дней. К решению данной проблемы приступил автор этих строк.

В конце было дано несколько очень важных рекомендаций для полной картины исследования, которые, безусловно, помогут в плане значительного повышения эффективности исследований в указанной сфере.

* * *

Ամփոփ: Հայաստանի երրորդ Հանրապետության հռչակման և կայացման, նրա՝ երեսունից ավելի տարիների պատմության բազմակողմանի քննությունն ու գիտական հետազոտումը հայ պատմագիտության կարևոր խնդիրներից է: Այն ունի արդիական ու քաղաքական կարևոր նշանակություն: 20-րդ դարավերջին Հայաստանի ազգային անկախության վերականգնումը և հայկական զույգ հանրապետությունների ստեղծումը շրջադարձային իրողություններ եղան հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ: Թերևս, թարմ հետքերով պատմություն գրելը դժվարին գործ է, պարունակում է անխուսափելի սխալներ, սակայն դա չի նշանակում՝ այն չպետք է ձեռնարկել: Ավելին, ժամանակակցի պատմական հետազոտությունն ունի դրական շատ կողմեր: Ընթացիկ երևույթների ու իրադարձությունների ականատեսը հնարավորություն ունի առավել ճիշտ արտացոլելու ժամանակի շունչն ու պատմական ոգին: Այդպիսի հետազոտությունն ունի նաև գործնական մեծ արժեք. լուսաբանելով պատմական զարգացման գործընթացը՝ այն ներգործում է նաև նրա հետագա խորացման վրա: Ուստի զարմանալ կարելի է, թե ինչպես անտեսելով այս կարևոր հանգամանքները ոմանք առաջարկում են հրաժարվել ժամանակակից պատմություն գրելուց , կամ դրանք գրել միայն 50-ից 100 տարի հետո:

Հայաստանի Երրորդ Հանրապետությունը կյանք առավ առաջին (1918-1920) և երկրորդ (1920-1991) հանրապետությունների հիմքի վրա, դարձավ նրանց ժառանգորդն ու իրավահաջորդը: Գիտապատմական ու գործնական առումներով պահանջվում է խորապես վերլուծել և իմաստավորել կատարված պատմական իրադարձությունները ու երևույթները, գնահատել դրանք և գրել Երրորդ հանրապետության ամբողջական պատմությունը: Անցած տարիների ընթացքում առաջացած խնդիրները թույլ տրված սխալներն ու թերությունները մասամբ և աստիճանաբար համակարգվում և լուծվում են, սակայն այդ գործընթացը լիովին հունի մեջ դնելու համար անհրաժեշտ է կենսագործել մի շարք կարևոր սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական, միջազգային ոլորտի հիմնախնդիրներ, որոնց պատմաքննական հետազոտությունն ու արված առաջարկներն կարևոր գիտագործնական նշանակությունն ունեն պատմությունից դասեր առնելու առումով:

Հայաստանի անկախ հանրապետության հռչակման շեմին հայ քաղաքական միտքը ինքնիշխան պետությունը պատկերացնում էր որպես ազգային ժողովրդավարական գաղափարների, ներմուծված շուկայական ազատականության մեխանիկական համադրում: Բայց շուտով պարզ դարձավ, որ ազգային գաղափարը գործնականում մշակված չէ: Նորանկախ պետությունը թեպետ թույլ էր քաղաքական ու տնտեսական

կառույցներով, մշակված չէր համազգային գաղափարախոսությունը, սակայն պետությունը պահպանելու համար օժտված էր քաղաքականապես ակտիվ և ժողովրդավարության ձգտող հասարակությամբ: Մեր կարծիքով, ի տարբերություն անցյալի, դա էր երրորդ հանրապետության կայացման գլխավոր գրավականը: Երեսուներեք տարիներ են անցել անկախության հռչակման օրվանից, սակայն այսօր հրապարակի վրա չկան ամբողջական աշխատություններ, բացի մեր կողմից ուսումնասիրված մի քանի աշխատությունների, որտեղ քննության առնված լինեն այդ ժամանակահատվածի ներքին և արտաքին քաղաքականության հիմնախնդիրները, այդ բնագավառների զարգացման փուլերն ու առանձնահատկությունները: Այդ կարևոր խնդիրների լուծմանն ձեռնամուխ ենք եղել մենք և շարունակում ենք աշխատել այդ ուղղությամբ:

Հայաստանի երրորդ Հանրապետության պատմությունը վկայում է, որ երկար սպասված անկախությունն ու տնտեսական կյանքի ազատականացումը առաջ բերեցին քաղաքական ու տնտեսական համակարգերի կտրուկ փոփոխություններ: Բազմաթիվ ձեռքբերումների հետ մեկտեղ՝ խոսքի ազատություն, բազմակուսակցականություն, ժողովրդավարական հաստատությունների կայացում, հոգևոր - մշակութային կյանքի գաղափարական սահմանափակումների վերացում, կառավարման համակարգի կայացում՝ ժամանակակից պետության բոլոր հատկանիշներով, հավասարակշռված արտաքին քաղաքականությունը և այլն, ունեցավ նաև բացասական հետևանքներ՝ բերելով աղքատություն և սոցիալական բևեռացում, գործազրկություն և արտագաղթ, օլիգարխացություն, կոռուպցիա, կախվածություն արտաքին ֆինանսական կենտրոններից և այլն: Անկախության շրջանի ամենամեծ ձեռքբերումներց էր հայ ժողովրդի հպարտությունը՝ հերոսական Արցախը, համաժողովրդական սխրանքով կերտած նրա անկախությունը և կայացած պետականությունը, որը պատմագիտության ուսումնասիրության կարևոր բնագավառներից է:

Հայաստանի երրորդ Հանրապետության պատմության (1991-2024թթ.) ուսումնասիրության վերաբերյալ հրապարակի վրա եղած գրականությունը կարելի է բաժանել երկու մասի՝ առաջին ՀՀ անկախության գործընթացի և ՀՀ ներքին քաղաքականության վերաբերյալ եղած սկզբնաղբյուրներ և ոսուսումնասիրություններ, երկրորդ՝ ՀՀ միջազգային դրության և արտաքին քաղաքականության մասին եղած փաստաթղթեր և ուսումնասիրություններ: Առաջին մասի մեջ են մտնում նաև հասարակական-քաղաքական կյանքի, սոցիալ-տնտեսական, բանակաշինության, այդ թվում՝ գիտակրթական ու մշակույթային ոլորտի վերաբերյալ ուսումնասիրությունները:

ՀՀ անկախության վերաբերյալ տպագիր սկզբնաղբյուներից կարելի է առանձնացնել ՀՀ անկախության մասին հռչակագիրը, ինչպես նաև փաստաթղթեր Արցախյան շարժման և Հայաստանի անկախ պետականության հռչակման վերաբերյալ, որոնք զետեղված են պ.գ.թ. Ռուբեն Ազիզբեկյանի աշխատությունների հավելվածներում [Ազիզբեկյան, 1992, 102-108]: Ընդ որում Է. Մինասյանի աշխատությունում ևս ներկայացված են նաև ՀՀ պետականության կայացման գործընթացի, ՀՀ ներքին քաղաքականության վերաբերյալ փաստաթղթեր [Մինասյան, 2003, 236-240]:

Փաստագրական հարուստ նյութեր ու գիտական լուրջ վերլուծություններ են պարունակում հատկապես Հայաստանի Հանրապետությունում տարբեր միջազգային կառույցների ծավալած գործունեությունն ու դրանց արդյունքները լուսաբանող ժողովածուները, որոնցից կարելի է առանձնացնել ՀՀ Ազգային գնահատման զեկույցները և ՀՀ-ում ՄԱԿ-ի գործունեությունը նկարագրող տեղեկատվական ժողովածուները [Էլեկտրոնային զարգացումը և Հայաստանը, գլոբալ մարդկային զեկույց, 2001; Ազգային գնահատման զեկույց, Հայաստանի Հանրապետություն, 2002; Միավորված ազգերի կազմակերպությունը Հայաստանում, 15 տարի, 2007; Հայաստան-ՆԱՏՕ՝ առաջընթացի 10 տարիներ 1999-2008 թթ.], 2008: ՀՀ ներքին քաղաքականության վերաբերյալ հարուստ փաստական նյութեր և վերլուծություններ են պարունակում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի նախաձեռնությամբ և օգնությամբ հանրապետության անկախ փորձագետների կողմից մշակված և 1995 թվականից սկսած պարբերաբար հրատարակված «Մարդկային զարգացման ազգային զեկույցի» ամենամյա համարները և Հայաստանի ազգային մրցունակության զեկույցները, որոնք վերաբերվում են բարձրագույն կրթության մարտահրավերներին [Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1995, 1995; Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1996, 1996; Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1997, 1997; Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1998, Պետության դերը, 1998; Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1999, Մարդկային զարգացման հինգ տարին Հայաստանում, 1999; Մարդկային զարգացման ազգային զեկույց. Հայաստան 2000, Մարդու իրավունքները և մարդկային զարգացումը, գործողություն հանուն առաջընթացի, 2000; Մարդկային՝ զարգացման ազգային զեկույց. Հայաստան 2001, Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում, 2001; Մարդկային զարգացման հիմունքներ, 2004; Մարդկային զարգացման ազգային զեկույց 2006, Կրթությունը Հայաստանում, 2006]: Հանրապետության սոցիալ-տնտեսական կյանքի, բնակչության սոցիալական վիճակի վերլուծությանն են նվիրված ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից հրատարակված այնպիսի վիճակագրական ժողովածուներ, տեղեկատվական-վերլուծական զեկույցներ, վիճակագրական բնույթի հրապարակումներ, ինչպիսիք են «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական

վիճակը 1991 թ. հունվար-դեկտեմբերից մինչև 2022 թ. հունվար-դեկտեմբերն ընկած ժամանակահատվածը»:

Հայաստանի վիճակագրական տարեգրքերի և վիճակագրական գրքույկների ամենամյա համարները, «Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով», ամենամյա և հոբելյանական ժողովածուները, հարավկովկասյան երկրների վիճակագրական տարեգրքերը և ՀՀ կենտրոնական բանկի տարեկան հաշվետվությունները [Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1990 թ., 1991; Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1991 թ., 1994; Հայաստանը թվերով 1992 թ., 1994; Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1993-1994, 1995; Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1995, 1996, 1998; Հայաստանի վիճակագրական տարեգիրք [1997, 1998], 2001; Հայաստանի վիճակագրական տարեգիրք [1999, 2000], 2001; Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2005, 2005; Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2010, 2010; Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2011, 2011; Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, 2012; Содружество независимых государств: Десять лет спустя. 1991-2001. /Исполнительный комитет СНГ; Содружество независимых государств в 2002 году, 2003; Հայաստանի Հանրապետության սոցիալական ոլորտի իրավական ակտերի ժողովածու, Ազգային վիճակագրական ծառայություն, 2001; Հայաստանի Հանրապետության միջազգային ներդրումային դիրքը 1997-2001 /Վիճակագրական ժողովածու, 2002; ՀՀ կենտրոնական բանկ Հայաստանի բանկային համակարգ; Դավթյան, Ասատրյան, 2002; Հայաստանը թվերով 2003; Հայաստանի Հանրապետություն Ազգային վիճակագրական ծառայություն; 2003]:

Հանրապետության ներքին կյանքին վերաբերող տպագիր սկզբնաղբյուրների մեջ առանձնանում են այնպիսինները, որտեղ սոցիալ-տնտեսական իրավիճակային վերլուծությունները անմիջականորեն կապվում են՝ հասարակական-քաղաքական կյանքի հետ: Նման հետազոտություններից են ՀՀ հասարակական հաստատություններից մեկի՝ «Մարդու իրավունքների ժողովրդավարության ինստիտուտի» (ՄԻԺԻ) կողմից իրականացված հետազոտությունների արդյունքում հրատարակված «Աղքատությունն ու ժողովրդավարությունը Հայաստանում» ուսումնասիրությունը, ինչպես նաև «Պատմություններ աղքատության մասին» երկհատորանի ազգաբանական հետազոտությունը: Առավել արժեքավոր հետազոտություններ են պարունակում «Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը», ամենամյա վիճակագրական-վերլուծական զեկույցներ, որտեղ ներկայացված է ոչ միայն պատմությունը, այլև տրված է նրա գնահատականն ու ցուցանիշների դինամիկան ազգաբնակչության աղքատության և նրա կրճատման նպատակով արված առաջարկները [Պատմություններ աղքատության մասին, գիրք առաջին, 2001; Պատմություններ

աղքատության մասին, գիրք երկրորդ, 2007; Արտագաղթը Հայաստանից, 2003; Հայաստանի ժողովրդագրական և առողջության հարցերի հետազոտություններ 2000, 2001; Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը, 2001; Ձեկույց իրական ակտիվներում իրականացված ներդրումների, ընտրանքային հետազոտություն, 2002; Հետազոտություն Հայաստանի Հանրապետությունում մասնավոր հատվածի զարգացման մասին, 1999]: Երկրի տնտեսական ձևավորման վիճակն ուսումնասիրելու տեսակետից արժեքավոր սկզբնաղբյուրներ կարող են հանդիսանալ ՀՀ Արդյունաբերության և գյուղատնտեսության իրավիճակը ներկայացնող վիճակագրական ժողովածուները ՀՀ-ում տնտեսական աճի, աղքատության կրճատման, տնտեսական իրավիճակային վերլուծական զեկույցները, «ՀՀ Արդյունաբերությունը 1990-1997 և 1998-2003 թթ.» և «ՀՀ գյուղատնտեսությունը 1990-1999 թթ.» վիճակագրական ժողովածուները, 2002 թ. հրատարակված «Տնտեսական աճն արդարացի բաշխման պայմաններում, աղքատության կրճատման ուղղված տնտեսական քաղաքականության ընտրություն», «Տնտեսական աճը, անհավասարությունը և աղքատությունը Հայաստանում» և «Կրթությունը, աղքատությունը և տնտեսական ակտիվությունը Հայաստանում, իրավիճակային վերլուծական զեկույց», ուսումնասիրությունները:

ՀՀ ժողովրդագրական ցուցանիշներին, ազգաբնակչության զբաղվածությունը, աշխատանքի պայմանների, հանրապետության կրթության, առողջապահական վիճակի, ապրանքների և ծառայությունների, սպառողական շուկայում գների փոփոխման դինամիկայի վերլուծությանն են նվիրված Հայաստանի ժողովրդագրական ժողովածուների ամենամյա համարները: «ՀՀ 2001 թ. մարդահամարի տվյալներն» անփոփոխ 11 հատորանի ուսումնասիրությունները, «Սպառողական շուկան 1995-2001 թթ.» վիճակագրական-վերլուծական ժողովածուն և առողջապահական ոլորտի հետազոտությունների արդյունքներն անփոփոխ զեկուցագրերը [Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 2003- 2006 թթ. ամփոփ հաշվետվություն, 2007; Սոցիալական բարեփոխումները Հայաստանում, 2011; Սոցիալական պետության հայեցակարգեր, հայկական իրողություններ և հեռանկարներ, Միջազգային գիտաժողովի նյութեր, փետրվար 2006 թ., 2007; Հայաստանի Հանրապետության պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգ, 2006; Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2004; Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2005 թ., 2005; Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2009 թ., 2009; ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները [ՀՀ Արագածոտնի մարզի ցուցանիշները], ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, 2003; ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները [ՀՀ Արարատի մարզի ցուցանիշները], ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, 2003; ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները [ՀՀ Արմավիրի մարզի ցուցանիշները], ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, 2003; ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները [ՀՀ Գեղարքունիքի մարզի ցուցանիշները], ՀՀ Ազգ. վիճ

ծառայություն, 2003; ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Լոռու մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, 2003; ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Շիրակի մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, 2003; ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Վայոց ձորի մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, 2003; ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Տավուշի մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, 2003; ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Սյունիքի մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, 2003; ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ Կոտայքի մարզի ցուցանիշները), ՀՀ Ազգ վիճ. ծառայություն, 2003; ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները (ք. Երևանի ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, 2003; ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները (Հայաստանի Հանրապետության ցուցանիշները), ՀՀ Ազգ. վիճ. ծառայություն, 2003]:

Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի լուսաբանման առումով որոշակի՝ գիտական արժեք են ներկայացնում պետական և հասարակական տարբեր մակարդակների գիտահետազոտական բնույթի հաստատությունների, կազմակերպությունների կողմից հրատարակված, գործնականում նաև աղբյուրագիտական նշանակություն ունեցող բազմաթիվ ուսումնասիրություններն ու քաղաքական բնույթի հրապարակումները: Դրանցից կարելի է առանձնացնել քաղաքացիական և սոցիալական զարգացման հիմնադրամի կողմից հրատարակված «Հայաստանի Հանրապետության քաղաքական կուսակցություններ» 2007 տեղեկագիրը, «ՀՀ գերագույն խորհրդի 1990-1995 թթ.», և ՀՀ Ազգային Ժողովի 1996 թվականից սկսած բոլոր գումարումներին նվիրված տեղեկատու գրքույկները, ինչպես նաև ՀՀ հասարակական, քաղաքական կազմակերպությունների զանգվածային լրատվամիջոցների գործունեությունը ներկայացնող ուսումնասիրությունները:

ՀՀ անկախության հռչակման, ՀՀ միջազգային ճանաչման և արտերկրի հետ հարաբերությունների ձևավորման ու զարգացման, ՀՀ արտաքին քաղաքականության ուսումնասիրման առումով կարևոր սկզբնաղբյուրներ են հանդիսանում դիվանագիտական բնույթի փաստաթղթերի ժողովածուները, որոնցից կարելի է առանձնացնել 2002 թ. Երևանում հրատարակված «ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու 1991-1995 թթ.», ինչպես նաև 1996-1998 թթ.-ի, 1999-2001 թթ.-ի երեք հատորները, ԱՊՀ շրջանակներում և ՄԱԿ-ի շրջանակներում կնքված պայմանագրերի ժողովածուները, որոնք հրատարակվել են Երևանում 2004 թ.: Կարևոր սկզբնաղբյուրներ են նաև ՀՀ արտգործնախարարության ամենամյա հաշվետվություններն ու նույն նախարարության հրատարակած «Դիվանագիտական ծառայությունը Հայաստանում», Եր., 1999 թ. աշխատանքը:

Հանրապետության ինչպես ներքին, սոցիալ-տնտեսական, այնպես էլ արտաքին քաղաքականության շատ հիմահարցերի ուսումնասիրման լավագույն սկզբնաղբյուր կարող է հանդիսանալ ՀՀ պատմության ամփոփ ժամանակագրությունը ընդգրկող 5 հատորանի գրքույկները [ՀՀ պատմության ամփոփ ժամանակագրություն 1996, (ներքին, սոցիալ-տնտեսական եւ արտաքին քաղաքականություն), 2002; ՀՀ պատմության ամփոփ ժամանակագրություն 1997, (ներքին, սոցիալ-տնտեսական եւ արտաքին քաղաքականություն), 2002; ՀՀ պատմության ամփոփ ժամանակագրություն 1998, (ներքին, սոցիալ- տնտեսական եւ արտաքին քաղաքականություն), 2002; ՀՀ պատմության ամփոփ ժամանակագրություն 1999, (ներքին, սոցիալ-տնտեսական եւ արտաքին քաղաքականություն), 2002; ՀՀ պատմության ամփոփ ժամանակագրություն 2000, (ներքին, սոցիալ-տնտեսական եւ արտաքին քաղաքականություն), 2002]:

Երրորդ հանրապետության պատմության համար սկզբնաղբյուրի նշանակություն են ձեռք բերում ուսումնասիրվող ժամանակաշրջանում պետական բարձր պաշտոններ զբաղեցրած Լ. Տեր-Պետրոյանի, Վ. Մանուկյանի, Ս. Հարությունյանի, Վ. Մովսիսյանի, Հ. Բագրատյանի, Ռ. Քոչարյանի, Ս. Սարգսյանի, Ֆ. Սարգսյանի, Ա. Կիրակոսյանի, Վ. Օսկանյանի աշխատություններն ու հուշերը, ինչպես նաև ՀՀ հանրապետության երեք նախագահների ելույթներն ու հարցազրույցները, զեկույցները (Տեր-Պետրոսյան, 2006; Հարությունյան, 2011; Մանուկյան, 2002; Գնացքից թռչելու ժամանակն է, հոդվածների ժողովածու; Բագրատյան, 2000; Հասարակությունը և պետությունը; Багратян, 2003; Մովսիսյան, 2001; Սարգսյան, 2013; նույնի, հոդվածներ, 2013; Կիրակոսյան, 2002): Հայաստանի երրորդ Հանրապետության բանակաշինության ուսումնասիրության ոլորտում արժեքավոր աշխատություններ են Սեյրան Օհանյանի «21-րդ դարի բանակ», «հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը», աշխատությունները:

Հայաստանի երրորդ Հանապետության անկախության հաստատման գործընթացի և առաջին տարիների պատմության լուսաբանմանը նվիրված առաջին պատմագիտական բնույթի հետազոտությունը Ռ. Ազիզբեկյանի վերոնշյալ աշխատությունն է, որին հաջորդում է նրա և պրոֆեսոր Գ. Գեղամյանի հեղինակած «Հայաստանը 1945-1990-ական թվականներին» 1994 թ. լույս տեսած ուսումնաօժանդակ ձեռնարկը: Այս նույն հիմահարցերին անդրադարձել է նաև տողերիս հեղինակ Է. Մինասյանը իր վերոնշյալ ծավալուն մենագրության առաջին երկու գլուխներում: Այս նույն հիմահարցին ծավալուն մենագրություն է նվիրել պ.գ.դ. Է. Պողոսյանը [Պողոսյանը, 2013] «Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1990-2001 թթ.)» վերնագրով: Այս արժեքավոր աշխատությունն ընդգրկում է հիմահարցի միայն առաջին տասնամյակի պատմությունը և այնքան ընդգրկուն հարցեր է պարունակում, հատկապես արտաքին քաղաքականության և միջազգային հարաբերությունների ոլորտի, որը շատ դեպքերում շեղել է հեղինակի ուշադրությունը բուն հիմահարցի հարցադրումներից:

ՀՀ ներքին քաղաքականության մի ամբողջական ոլորտի՝ ՀՀ սոցիալ-տնտեսական վերափոխումների՝ մեկ տասնամյակից ավելի պատմությանն անդրադարձել է տողերիս հեղինակը իր վերոնշյալ ծավալուն մենագրության մեջ, որը, առաջիններից մեկը լինելով ՀՀ երրորդ հանրապետության պատմության ուսումնասիրության ոլորտում, ճանապարհ հարթեց հիմնահարցի պատմագիտական հետազոտության համար, որին հաջորդեցին Է. Մինասյանի ղեկավարությամբ հանրապետության տարբեր ոլորտների վերաբերյալ պաշտպանած շուրջ երկու տասնյակ ատենախոսությունները [Չափարյան, 2010; Գևորգյան, 2011; Մկրտչյան, 2012]: Հայաստանի երրորդ Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի բազմաթիվ հիմնահարցեր քննության են ենթարկված Գ. Քեռյանի, Աբրահամյանի, Գ. Պողոսյանի, Թորոսյանի և այլոց աշխատություններում [Պողոսյան, 2006; Թորոսյան, 2006; Քեռյան, 1996; Քեռյան, 2002; Հայրիկյան, 1997; Հայրիկյան, 1997; Հայրիկյան, 2002; Աբրահամյան, 2011; Աբրահամյան, 2009]:

ՀՀ երրորդ հանրապետության տնտեսական քաղաքականության առանձին խնդիրներին են նվիրված Վ. Խոջաբեկյանի, Հ. Սարգսյանի, Ա. Մարկոսյանի, Լ. Անանյանի, Մ. Մկրտչյանի, Գ. Ավագյանի, Մ. Գևորգյանի, Վ. Մանասյանի, Ս. Դավոյանի, Ս. Մելքումյանի, Հ. Մամիկոնյանի, Թ. Մանասերյանի աշխատությունները: Հանրապետության սոցիալական ոլորտին առնչվող բազմաթիվ հիմնահարցեր՝ արծարծված են Մ. Գաբրիելյանի, Ն. Մարգարյանի, Ա. Եսայանի, Ա. Մկրտչյանի, Հ. Աղաջանյանի, Ա. Դանիելյանի, Հ. Խառատյանի աշխատություններում և հոդվածներում [Խոջաբեկյան, 2001; Խոջաբեկյան, 1979; Սարգսյան, 2001; Մարկոսյան, 2001; Մարկոսյան, 2004; Аналитический журнал, Рынок капитала в Армении № 7,8(65,66), 2001; Կիրակոսյան, 2002]:

Հայաստանի երրորդ հանրապետության երկրորդ հիմնահարցին՝ ՀՀ արտաքին քաղաքականությանն ու միջազգային հարաբերությունների ոլորտին են անդրադարձել պ.գ. թեկնածուներ Վ. Ավագյանը, Տ. Բալյանը, Ա. Շահնազարյանը, Մ. Սողոմոնյանը, Ա. Կարապետյանը, Ց. Մալխասյանը, Ա. Անանյանը, Լ. Մալեքյանը, Տ. Մարտիրոսյանը, Ա. Մելիքյանը, Ժ. Մանուկյանը և պ.գ.դ. Վ. Տողոնյանը իրենց պաշտպանած ատենախոսություններում [Ագլյան, 2001; Բալյան, 2002; Շահնազարյան, 2002; Արշակյան, 2008]: Նրանցում քննարկվում են ՀՀ հարաբերությունները Ռուսաստանի Դաշնության, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, ԱՊՀ-ի, Հունաստանի հետ, ինչպես նաև Ղարաբաղյան հիմնահարցը՝ միջազգային դիվանագիտության մեջ և Հայոց ցեղասպանության գործոնը հայ-թուրքական հարաբերությունների ոլորտում: Այս վերջին հիմնահարցին, ինչպես նաև ՀՀ ժողովրդագրության քաղաքականության այլ

հիմախնդիրներին է անդրադարձել նաև ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Մելքոնյանը իր «Հայոց պատմության դասերն ու պատգամները» արժեքավոր և խիստ արդիական աշխատության մեջ:

ՀՀ արտաքին քաղաքականության որոշ հիմահարցերի և հատկապես Հայոց ցեղասպանության հիմախնդիրներին է անդրադարձել նաև Է. Մինասյանը իր մի շարք հոդվածներում և Լ. Բարսեղյանը իր աշխատություններում [Մինասյան, 2005ա, 66-74; Մինասյան, 2005 բ, 285-301, Մինասյան, Պատմություն եւ մշակույթ, հայագիտական հանդես, Ա, 2011ա, 323-331; Մինասյան Էդիկ, Պատմություն եւ մշակույթ, հայագիտական հանդես, Ա, 2011 բ, 3-22; Բարսեղյան, 1998; Բարսեղյան, 2002; Բարսեղյան, 2004]: Այս ամենով հանդերձ դեռևս հրապարակի վրա չկա մի ամբողջական աշխատություն, որը նվիրված լինի Հայաստանի հանրապետության պատմության անցած 20-ից ավելի տարիներին, որը մեր օրերի համար խիստ կարևոր է և արդիական:

Ամփոփում: Ներկայումս Հայաստանի Հանրապետության պատմության ուսումնասիրությունը կանգնած է նոր մարտահրավերների առջև՝ կապված տեղի ունեցող աշխարհաքաղաքական փոփոխությունների հետ: Հայտնի իրողություն է, որ Ադրբեջանը իր ազգակից Թուրքիայի օգնությամբ 2020 թ. 44-օրյա արցախյան պատերազմում բռնազավթեց Արցախի հանրապետության տարածքի մեծ մասը, իսկ 2022 թ., շուրջ յոթ ամսից ավելի շրջափակելով Արցախը, սովամահության դատապարտեց արցախահայությանը՝ իրագործելով իր ցեղասպանության քաղաքականությունը:

Հաջորդ տարվա սեպտեմբերին նոր ագրեսիայի արդյունքում բռնազավթեց Արցախի Հանրապետության ամբողջ տարածքը՝ բռնագաղթի ենթարկելով արցախահայության 120 հազարանոց բնիկ ազգաբնակչությանը իր դարավոր մայր հողից: Փաստորեն, միջազգային արենայում, խոշոր տերությունների աչքի առջև, առանց նրանցից որևէ մեկի միջամտության, ռուսական դաշնակից ուժերի առկայության պարագայում, Ադրբեջանի զինված ուժերը ցեղակից Թուրքիայի անմիջական օժանդակությամբ և չմիջամտելու պայմանավորվածությամբ, ոչ միայն վերացրեցին շուրջ 33 տարի գոյություն ունեցող Հայաստանի երկրորդ, հայկական անկախ հանրապետությունը, բռնազավթելով նրա տարածքը, այլև շարունակաբար վերացնում են հայի դարերով ստեղծված պատմամշակութային արժեքներն ու հուշարձանները՝ փորձելով ջնջել հայության հետքը Արցախի տարածքում: Չբավարարվելով դրանով՝ այդ ագրեսոր պետությունը ռեալ սպառնալիք է ստեղծել Հայաստանի երրորդ հանրապետության տարածքային ամբողջականությանը, նրա անվտանգությանն ու գոյությանը ընդհանրապես:

Այսօր էլ Ադրբեջանը շարունակում է իր զինված խմբավորումը չհանել Հայաստանի հանրապետության Սյունիքի և Գեղարքունիքի շուրջ 200 քառակուսի կմ տարածքից՝ ապօրինաբար բռնազավթելով այն: Կեղծելով Արցախի և Հայաստանի Հանրապետության պատմությունը՝ Ադրբեջանի ներկայիս ղեկավարությունը ագրեսոր Ի. Ալիևի

ղեկավարությամբ Հայաստանի Հանրապետության բնիկ տարածքը հայտարարում է Արևմտյան Ադրբեջան և փորձում է հիմնավորել ադրբեջանցի փախստականների վերադարձը Հայաստանի հանրապետություն: Ահա նման պայմաններում ոչ միայն կարևորվում է ադրբեջանցի կեղծարարներին հակահարված հասցնելու հանգամանքը, այլև՝ միջազգային արենայում նոր փաստերով հիմնավորել Արցախի բնիկ ազգաբնակչությանը իր մայր հողը վերադարձնելու իրավունքն ու անվտանգության ապահովումը: Խնդիր է դրվում օտար լեզուներով հրատարակելու Հայաստանի երրորդ հանրապետության ամբողջական պատմությունը, որտեղ անհերքելի փաստերով ցույց կտրվի ոչ միայն ագրեսոր Ադրբեջանի և նրա ցեղակից Թուրքիայի կողմից միջազգային բոլոր իրավունքների, նաև մարդու իրավունքների բացահայտ խախտում, Արցախի տարածքի բռնի զավթումն ու բնակչության էթնիկ զտման, ցեղասպանության փաստերն ու բռնագաղթի ենթարկելը, այլև Հայաստանի հանրապետության տարածքային ամբողջականության և անվտանգության դեմ կազմակերպվող սպառնալիքներն ու նոր ագրեսիա ձեռնարկելու մտադրությունները:

Արդի պատմության գիտական շարադրման համար խիստ վտանգավոր է վերջին տարիներին հանրապետության իշխանության բարձրագույն օղակներից հնչող հակագիտական այնպիսի թեզեր, որոնք Հայոց ցեղասպանությունը կասկածի տակ դնելու փորձեր են: Վերջերս ի հայտ է եկել Արևմտյան Հայաստանը իրական Հայաստանին հակադրելու թեզը, որը առավել վնասակար ու վտանգավոր է արդի պայմաններում, երբ Ադրբեջանը փորձում է տեր դառնալ մեր բնիկ հայրենիքին՝ այն անվանելով Արևմտյան Ադրբեջան: Ցավոք, այս կեղծարարության դիմաց փորձ է արվում հրաժարվել մեր պատմական հայրենիքից, որտեղ մեր ժողովրդի նախնիների մեծ մասի արմատներն են: Արդի պայմաններում հայագիտության և առավել ևս հայոց պատմության ամբողջական շարադրանքի համար խիստ վտանգավոր և հակագիտական է «Հայոց պատմություն» առարկայի անվան ընդունումը, որը սահմանափակում է հայոց պատմության շրջանակը՝ նրանից դուրս թողնելով ոչ միայն հայկական գաղթօջախների՝ Հայաստանից դուրս ստեղծված դարավոր պատմությունը, սփյուռքի պատմությունը, այլև Կիլիկյան հայոց պետության պատմությունն ու հարուստ մշակույթը:

Մեր օրերում հակագիտական է նաև դպրոցական 10-րդ դասարանի հայոց պետականության պատմության թեմայի շարադրանքից Արցախի Հանրապետության պատմության դուրս թողնելը: Մեր կարծիքով, վերոնշյալ այս բոլոր հանգամանքները պետք է հաշվի առնել Հայաստանի երրորդ հանրապետության ամբողջական պատմությունը գրելիս և անպայմանորեն օտար լեզվով հրատարակելու գործում:

Առաջարկություններ: Հաշվի առնելով Հայաստանի Երրորդ Հանապետության պատմության ողջ կարևորությունն ու ազգային, գիտական և քաղաքական նշանակությունը կարծում ենք.

- առաջիկայում այն պետք է իրականացնել կոմպլեքս եղանակով՝ ներգրավելով դրա մեջ ոչ միայն ՀՀ ԳԱԱ Պատմության, Արևելագիտության ինստիտուտները և ԵՊՀ պատմության, միջազգային հարաբերությունների ու արևելագիտության ֆակուլտետները, այլև ԳԱԱ տնտեսագիտության, Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտները,
- ուսումնասիրությունները պետք է իրականացնել ոչ միայն զուտ քաղաքացիական պատմության քննության առումով, այլև տնտեսական, հասարակական զարգացման, աշխարհաքաղաքական զարգացումների, տարածաշրջանային գործընթացների և այլ հարցադրումների տեսանկյունից,
- ուսումնասիրությունների արդյունավետությունը էապես կարելի է բարձրացնել՝ գիտական համագործակցություն հաստատելով նշված հարցերով զբաղվող արտասահմանյան գիտնականների և, մասնավորապես, սփյուռքահայ պատմաբանների հետ,
- հարկ ենք համարում ընդգծել, որ, հաշվի առնելով Հայաստանի երրորդ հանրապետության պատմության ուսումնասիրության կարևորությունը, անհրաժեշտ է ստեղծել համակարգող մի մարմին՝ ընդգրկելով նրա մեջ հիշյալ հարցերով զբաղվող բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչներին, որը հնարավորություն կտա բանականորեն օգտագործել հանրապետության գիտական ներուժը,
- միաժամանակ սոցոլոգիական հարցումների օգնությամբ և անձնական դիտարկումներով կարելի է քննարկել և վերլուծել հանրապետության կյանքի տարբեր ոլորտներում ընթացող գործընթացները:

Գրականության ցանկ

Azizbekyan, 1992 - Azizbekyan RR., Hayastany verakarruts'umits' minch'ev ankakhut'yun, Hamarrot aknark, Yerevan, HGA hrat., 1992: **(in Armenian)**

Minasyan, 2003 - Minasyan E., Sots'ial-tntesakan verap'vokhumnery Hayastani hanrapetut'yunum (1990-2003 t't'.), Yerevan, YePH hrat., 2003. **(in Armenian)**

Minasyan, 2005 a - Minasyan E., Hayots' ts'eghaspanut'yan mijazgayin chanach'man gortsynt'ats'nery verjin ch'vors tasnamyakum, Mets yegherrn-90, Hanrapetakan gitakan nstashrjani nyut'er, Gyumri 2005a, ej 66-74. **(in Armenian)**

Minasyan, 2005 b - Minasyan E., Hayots' ts'eghaspanut'yan mijazgayin chanach'man gortsynt'ats'y, Hayots' mets yegherrn 90, hodvatsneri zhoghovatsu, Yerevan, 2005b, ej 285-301. **(in Armenian)**

Minasyan, 2011 a- Minasyan E., Hayots' ts'eghaspanut'yan chanach'man mijazgayin nor p'uli arrandznahatkut'yunnery, Patmut'yun yev mshakuyt', hayagitakan handes, A, Yerevan, 2011, ej 323-331. **(in Armenian)**

Minasyan, 2011 b - Minasyan E., Hayastani Hanrapetut'yan yev Rrusastani Dashnut'yan haraberut'yunnery (1991-2001t't'.), Patmut'yun yev mshakuyt', hayagitakan handes, A, Yerevan, 2011, ej 3-22. **(in Armenian)**

Barseghyan, 1998 - Barseghyan L., Sijazgayin hanrut'yuny datapartum e hayots' ts'eghaspanut'yuny, Yerevan, 1998. **(in Armenian)**

Barseghyan, 2002 - Barseghyan L., Fransian hayots' ts'eghaspanut'yuny orensdrut'yamb chanach'ats arrajin petut'yunn e ashkharhum, Yerevan, 2002. **(in Armenian)**

Barseghyan, 2004 - Barseghyan L., Taregrut'yun hayots' ts'eghaspanut'yan pashtonakan datapartman yev chanach'man (1915-2000 t't'.), Yerevan, 2004: **(in Armenian)**